

4316

9(47925)

U-64

1898

4014

Հովհաննէս Կարապետ:

ՍՈՎՐԱՏ ՊԱՏՄԱԿԻՐ

ԵՒ

88

ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ



Արտատպած 1898 թ.-ի Մարտ եւ Ապրիլ
«Արարատ» ամսագրից

16579-58

ՄԵՍՐՈՂ ՎԱՐԴԱՊԵՏ



ՀՐԱՄԱՆԱԻ ✓

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԱՂԱՐՉԱՊԱՏ

ՑՊԱՐԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒՈՅ Ա. ԷՋՄԻԱԾՆԻ

1898

9(47.925)
Մ-64

33 607-4. h.

8

Дозволено цензурою, 5 Мая 1898 г. г. Тифлисъ.

2008

3 (Cat. 325)
U-64

ՍՈՎԵՏ ՊԵՏՄԱԿԻՐ

Ե Ի

Մ Ո Վ Ս Է Ս Խ Ո Ր Ե Ն Ս Ց Ի

Այս երկու պատմագիրների վիճակը զարմանալի կերպով կապուեցին միմեանց հետ. երկուսի առընչութեան ինչիքը՝ զանազան տեսակ կարծիքների և քննութեանց ենթարկուելով, այժմ երեւում է թէ վախճանական լուծման է հասնում: Դեռ միայն մի քանի ամիս է անցել Սոկրատի պատմութեան հրատարակութիւնից, որի յառաջաբանի մէջ այնպիսի արդիւնքների էի հասել, որ համոզուած էի թէ վերջնական է լինելու և ահա շնկատուած ուշադրութիւնից վրիպած մի փոքրիկ, աննշան հատուած այսօր յիշաչըջել է իմ համոզմունքը և ես ստիպուած եմ թողնել բաժանուել իմ երկարամանակեայ հաստատուն կարծիքից և միանալ նոցա հետ, որոնք վաղուց փոխել են իրենց հայեացքը մեր Պատմահօր մասին: Այսօր ինձ համար էլ իրողութիւն է, որ Մովսէս Խորենացու անունով մեր ձեռքը հասած Հայոց Պատմութիւնը այլ ևս չէ կարող Եւրդ Կարու գործ համարուել: Ես Սոկրատի հրատարակութեան յառաջաբանի մէջ ընդարձակ տեղ էի տուել Սոկրատի, Սեղբեստրոսի և Խորենա-

ցու պատմութիւնների փոխառութիւններին. իմ նպատակից դուրս է եղել քննել Խորենացու խնդիրը ամբողջութեամբ, այլ ես փորձել եմ որոշել միայն յիշեալ գործերի մասին յայտնած կարծիքները, իմ ստացած արդիւնքի էական կէտերը սուքա են.

ա. Խորենացին անկախ է Մեծ և Փոքր կոչուած Սոկրատներից, ինչպէս նաև Սեղբեստրոսի վարքից: նա դոցանից ոչ մէկից չէ օգտուել՝ ոչ յուներէն բնագրից և ոչ էլ Հայերէն Թարգմանութիւնից:

բ. Յիշատակարանների տուած Հաստատուն վկայութիւններով գտել եմ Մեծ Սոկ. և Սեղբեստրոսի վարքի Հայերէն Թարգմանութեան տարիները և հաւանական հիմունքներով որոշել Փոքր Սոկ. կըրձատման ժամանակը:

գ. Պրոֆ. Կարիէրի և ուրիշների հետ ընդունելով որ կապ կայ Խորենացու և Փ. Սոկրատի մէջ, պնդել եմ նոցա դէմ որ Խորենացին է վերջինին աղբիւր ծառայում: որը համառօտուել է Է-րդ դարում: հետևապէս Խորենացին այդ ժամանակ արդէն կար և տարածուած էր, ուրեմն նրան չէ կարելի և կամ Թ. դարը բերել:

Գրքիս հրատարակութիւնից շատ չանցած քըննական յօդուածներ լոյս տեսան. Պ. Ստ. Մալխա՛սեանը գրեց «Մշակ»ի 1897 № 113-ի մէջ. նա ընդունում է իմ եզրակացութիւնները: Պրոֆ. Գր. Խալա՛նութեանը ավենարնդարձակ քննութիւն տուեց «Հանդէս Ամսօրեայ»ի 1897 թ. Հոկտ. Սոյ. և Դեկտ. ամսահամարներում: սրա մասին իմ ասելիքը ստորև է, Գեր. Սահակ եպիսկոպոսը տուել է Սոկրատ

տի տպագրի Ա. գրքի և Երուսաղէմի ձեռագրի տարբեր ընթերցուածները՝ իւր դիտողութիւններով «Արարատ»ի մէջ. դրա մասին ես արդէն գրել եմ նոյն «Արարատ»ում 1897, Սեպտ. Հոկտ. (էջ 406-411-ի). Դարձեալ նոյն տեղը (էջ 422-424) Գլ. Տէր Մկրտչեանը քննելով Խոր. ժամանակի խնդիրը իւր նոր գտած փաստով, ընդունում է իմ կարծիքը՝ միայն Փ. Սոկրատի մասին. Եւ ի վերջոյ Հ. Բ. Սարգսեանը Բագմա՛վէպի մէջ 1897. Դեկտ. (էջ 565-575) յայտնում է, որ Սոկրատի հրատարակութիւնը մեծ պակասութիւններ ունի, որովհետև իր ուղած ծրագրով չեն հրատարակել և որ հրատարակչի յառաջաբանի մէջ մի բան չկայ ասուած, որ ինքը իւր հմտալից յօդուածներում արդէն ասած չլինէր:

Այս քննադատութիւնները, մանաւանդ Պրոֆ. Խալաթեանի և Գ. Տէր Մկրտչեանի՝ նոր կոռուաններ են տուել խնդրի լուծման համար, ուստի հարկ եմ համարում պատասխանելով նոցա, վերստին քննել և ուղղել յառաջաբանիս մի քանի կէտերը և ասել թէ՛ ինչ անհիմն բաներ կան նոցա ասածների մէջ:

Իմ արած մեծ սխալը Սեղբեստրոսի ընդարձակ վարքի մի հատուածի և Խորենացու պատմութեան Բ. 83 նմանութիւնների կշռադատութեան մէջն է եղել, որովհետև թէ դոցա մէջ ակն յայտնի նմանութիւն կայ, այդ ես տեսել եմ և շեշտել. «Խորենացին և Բեդարձակ վարիւր կարելի է ասել բառացի արագրում եւ նոյն աղբիւրից, Խորենացին համառօտում է» (էջ Ծ Ա), իսկ մի ուրիշ անգամ ասել եմ՝ «Խորենացին Սեղ. համառօտ վարքի հետ համաձայնելով հանդերձ, ունի ակնյայտնի տարբերութիւն»

ներս, դուրս է գալիս այն, որ նա մտնում անուրեւանց մէջ Ընդարձակի և նեւակ», և ըն (էջ ԾԵ): Ես ստորև կ'ընթացատրեմ թէ ինչն է ինձ շփոթեցրել և ուղիղ եղրակացուցութիւնից հեռացրել. բայց խնդիրը վրձնողը այնքան էլ իմ բաղդատած հատուածը չէ, այլ մի ուրիշ մեծ, բառացի արտագրած հատուած, որը վրիպել էր իմ ուշադրութիւնից և որ աւելանալով առաջինի վրայ՝ այլ ևս կասկածի տեղիք չէ թողնում:

Այդ հատուածը Սեղբեստրոսի ընդարձակ վարքի այն կտորն է, որի մէջ վարքագիրը գեղեցիկ խօսքերով նկարագրում է իւր գոված սրբի հոգեկան բարձր յատկութիւնները և Մ. Խորենացին հայերէն խորհրդանշաններով նոյնը փոխ առնելով շնչին, և այն էլ գիտակցական փոփոխութիւններով յատկացրել է ս. Մեսրոպին, Հատուածի նմանութիւնը միաժամանակ և միմեանցից անկախ նկատել են պ. պ. Նորայր Բիւզանդացին, Գրիգոր Խալաթեանը և Գալուստ Տէր Մկրտչեանը, երեքն էլ Խորենացու պատմութիւնով մասնագէտ պարագոյներ. իսկ ես Խորենացիով առանձնապէս մինչև օրս չեմ պարտապաժ, և չէի կարող հեղեակապէս՝ Սեղբեստրոսից—Մեսրոպ՝ այդքան հեռու անձանց վարքերի մէջ որևէ նմանութիւն որոնել և գտնել:

Խնդրական հատուածները արդէն Պրոֆ. Խալաթեանի և Գ. Տէր Մկրտչեանի վերոյիշեալ յօդուածներում առաջ են բերուած և պարզաբանուած, սակայն խնդրի լուսաբանելուն համար իմ պարզաբանութիւններով այստեղ կ'ընեմ:

Նախապէս պէտք է իմացած՝ որ երեք միմեան-

ցից համարեա անկախ գրքեր կան, որոնցից իւրաբանչիւրի առընչութիւնը Խորենացու հետ հարկաւոր է ապացուցանել կամ հերքել:

Իոցանից ժամանակով ամենահինն է Հռոմայ Սեղբեստրոս պապի ընդարձակ վարքը, որը թարգմանուել է հայերէն «Աբասուն Գրիգորի Չորոյփորեցու» ձեռքով, Վամարականների փեսայ Արաց Ներսէս իշխանի¹ հրամանաւ (Տ. յառաջ. էջ 2Ե) փրկչական 678 թուին, Բացի Հ. Բ. Սարգսեանից, միևնեւրը ընդունում են այս թուականը, որ առնուած է հաստատուն յիշատակարանից, Այս գործի բուն բնագիրը իւր ներկայ գրութեամբ գրուել է Ե. դարու վերջերում լատիներէն, իսկ Ջ. Ի սկիզբները թարգմանուել է յունարէն լեզուով,² միայն Ե. դրի վերջին կիսում յունարէնից հայերէն:

Երկրորդն է Սոկրատ Սքոլաստիկոսի Գ. դարում յունարէն լեզուով գրած ընդհանուր Եկեղեցական Պատմութիւնը. Փիլոն Տիրակացին ուղիղ 695—696 թ. նոյնը թարգմանել է հայերէն. թարգմանութեան տարեթիւը առնուած է Երուսաղէմի ձեռագրի մի յիշատակարանից, որի մէջ կան հինգ

¹ Ընդունում եմ Գր. Խաչատրեանի առածը Արշարունեաց Գրիգոր եպիսկոպոսի մասին (Տես Առա յօդուածը էջ 290):

² Տես Բագրևաժեայ 1897 Դեկտեմբերի էջ 574—575: Հեատրիսը այն է, որ Հ. Սարգսեանը Հիւզ համաժամանակ բուերը մի կողմ է բողել եւ չգիտեմք ինչ հիման վրայ, ուղիղ է համարում զոցանից միայն մեկը. իսկ միւսները:

համաժամանակ (synchronismoi) տարեթուեր (տ. յա-
նաջբ. էջ 29—26). դարձեալ նոյն Հ. Բ. Սարգսեա-
նը ընդդէմ իմ և միւս քննադատների փորձում է մի
մեծ գիւտ անել և ապացուցանել, «որ այդ թարգմա-
նութեամբ յաջող կերպով պիտի պարզուի Խորե-
նացոյ կնճիոն, եթէ ընդունինք (?), որ դա՛ ոչ թէ
696-ին, այլ Լևոն Բ կայսեր առաջին տարին, այն
է 474-ին կարելի է (?) որ թարգմանուած ըլլայ՝ փո-
քրը թարգմանիչներէն միոյն ձեռքով»¹ մենք մը-
նակով մեր կարծիքի, սպասենք և յուսանք:

Վերջապէս երրորդն է Փոքր Սոկրատ կոչուա-
ծը, որ առաջին երկու գործերի հայերէն թարգմանու-
թեան համաժամանակն է ի մի ձուլուած, այնպէս որ
սասի գիրք է ներկայացնում: Սրա տարեթիւը յայտ-
նի չէ. մտաւորական հաշիւներով ենթադրական ժա-
մանակը համարել եմ Ե-րդ դարի վերջը: Մեր պատ-
մագիրներից իմ գտած ամենահին տեղեկութիւնը
ինձ հասցրել էր միայն մինչև ԺԳ-րդ դարը, բայց
յետոյ Գալուստ Տէր-Մկրտչեանը Անանիա Մոկացու
թղթերի մէջ գտել է Սոկրատի յիշատակութիւնը,
Մոկացին իւր մի թղթի մէջ, «Յաղագս որ ասն
թէ մի պատիւ հայրապետին և եպիսկոպոսին և վա-
սըն մի լինելոյ կոչմանն»², խօսելով հայրապետա-
կան աստիճանի մասին հարցնում է. «զի՞նչ իմանաս
զիտրերդածուրեանն ժամն, զոր թագաւորն հրամայէր

1 M. l'abbé Duchesne. Le liber Pontificalis etc l. p.
cix et cx.
2 Տես «Արարես» (1897 թ. Յունիս էջ 277 և էջ
283) Հրատ. Գ. Տէր Մկրտչեանի:

ի վերայ Պրոկղի, յորժամ յեպիսկոպոսութենէ
ի հայրապետութիւն կոչեն ըստ շարժութեան խնդրո-
րոյ»: Այդ յիշատակութեան մասին Գ. Տ. Մկրտ-
չեանը (յ. տ. էջ 279 Ծն.) այս բացատրութիւնն է
տալիս. «Բայց աւելի արժանի է ուշադրութեան
Անանիայի մէջ բերած «զխորհրդածութեան ժամն»
ասացուածը որ անպայման Փ. Սոկրատից է և մե-
ծումը չկայ (տես Մեծ և Փոքր Սոկր. երես. 673):
Այս վկայութեանք անպայման ապացուցանում է, որ
սասներոյ դարում Սոկրատի եկեղ. պատ. Փոքր խմբագրո-
րիւնը արդէն կար եւ ծակօր ու սարածուած գրուածք էր»:
Սրանով գտնուել է Փ. Սոկ. ամենաուշ ժամանա-
կուայ հաստատուն սահմանը:

Այժմ տեսնենք թէ այս երեք գրքերից որն է
Խորենացոյց օգտուել կամ հակառակը: Բարեբախ-
տաբար նոցա գրութեան ժամանակները յայտնի են,
որով և մեծ դիւրութիւն են տալիս Խորենացու
պատմութեան ժամանակի հնագոյն սահմանը գտնե-
լու՝ գուցէ նաև վերջին սահմանը:

Ա.

ՍԵՂԲԵՍՏԻՈՍԻ ԸՆԴԱՐՁԱԿ ՎԱՐՔԸ ԵՒ ԽՈՐԵ-
ՆԱՅՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ:

Մինչև այժմ նկատուած են երեք նման հա-
տուած, երկուսը մեծ, մէկը փոքր. մեծերից մէկը
քաղուածօրէն է, միւսը համարեա բառացի, և այդ է
որ չէի նկատել:

1.

ՎԱՐԲ ՍԵՂԵՍՏՐՈՍԻ ԷՁ. 699.

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ Գ. 67.

... և (Սելգեստրոս) բարե-
վայելչացեալ քան զբոլոր վի-
ճակաւորսն:

... և երանելին Մեսրոպ ... գե-
րազանցեալ քան զամենայն:

Վասն զի ամբարտաւանութիւն
և մարգահաճողութիւն առ ի նո-
րա վարս տեղի գտանել ոչ ոչրեք
կարացին, այլ հեզ և բարիակամ
և բարեխորհուրդ գոլով և երկ-
նայնոցն զարդարեալ սովորու-
թեամբք զինքն բոլորեց ցուցա-
ւեռ:

Բանդի ամբարտաւանութիւն և
մարգահաճողութիւն ի նորա վարս
տեղի գտանել երբեք ոչ կարա-
ցին. այլ հեզ և լաւակամ և բա-
րեխորհուրդ գոլով և երկնայնոցն
զարդարեալ սովորութեամբք զին-
քն բոլորեց ցուցանէր:

Վասն զի գոյր տեսեամբ հրեշ-
տակական, բանիւ տրամապայծա-
րանաւ, գործով սոռոր, մարմ-
նով արտափայլեալ. օարասիւք
անճառ, խորհրդակցութեամբ մեծ,
հաւատով ուղիղ, յուսով համ-
բերողական, սիրով անկեղծաւոր:

Վասն զի գոյր տեսեամբ հրեշ-
տակական, մտօք ծննդական, բա-
նիւք պայծառ, գործովք ժուժ-
կալ, մարմնով արտափայլեալ,
օարասիւք անճառ, խորհրդակ-
ցութեամբ մեծ, հաւատով ուղիղ,
յուսով համբերող, սիրով անկեղ-
ծաւոր, ոչսոռցանելով անճան-
ժրոյք:

Սյլ վասն զի զբոլորսն նորա
զուղղութիւնսն ոչ եմ բաւական
ասել, առ ի մասնաւորականսն
գործեցեալս զարձուցեց զբանս: Ա

Սյլ վասն զի զբոլոր ուղղու-
թիւնս նորա ոչ եմ բաւական ա-
սել, ի հանգիստ Եորա եղիարա-
ցըն զարձուցեց զբանս:

Ա Համեմատի Գ. Տեր-Մկրտիչակի «Խորհուրդս ժամա-
նակը որոշելու ինր փորձ» «Աւարտ» (1897 էջ 422-424) եւ
Գր. Խաչաթեանի «Մով. Խոր. Լոռագոյն սորիւրեւոյ մասին»
«Հանդ. Աւստրեայ» (1897 էջ 337—340). նաեւ Նորայր Բիւ-
զանդի Յուլիսի 25-ին առ ինձ ուղղած մասնաւոր նամա-
կում նշանակուած եւ խնդրական հասուածներէ կէտը (տես
Գ. Տ. Մ. յիշեալ յօդուածի ծանօթութիւնը):

Ահա այս նշանաւոր հատուածն է, որ պէտք է
ամենապիճողական նշանակութիւն ունենայ Խորե-
նացու ժամանակը որոշելու խնդրում: Ամենատեսակ
ենթադրութիւն՝ թէ կամ Խորենացին է յունարէ-
նից Ե-րդ դարում թարգմանել և պատահաբար
այդքան նմանուել Է-րդ դարու թարգմանչին, կամ
թէ Է-րդ դարու թարգմանչին է այդ կտորի թարգ-
մանութեան ժամանակ աղղուել Խորենացուց, զը-
ժուար և անհիմն ենթադրութիւններ կմնան, մանա-
ւանդ որ միայն այս հատուածը չէ Խորենացու փո-
խառութիւնը: Իմ կարծիքով միայն մի ճանապարհ
կայ Խորենացուն ժամանակը յետ՝ տանելու.
այդ այն է թէ ցոյց տրուի, որ Սելգեստրոսի վար-
քը աւելի շուտ է թարգմանուած, քան ձեռագրի
յիշատակարանն է ցոյց տալիս, որի դէմ են սակայն
մեր ունեցած հաստատուն յիշատակարանը և թարգ-
մանութեան լեզուն: Ա Համեմատութեան մէջ ստորա-
գծուած են երկու հատուածի թեթեւ տարբերու-
թիւնները. դոցանից մի երկուսը արագընում են
Խոր. ձեռագրի տարբեր ընթերցուածներով. օրինակ
Սեղ. « առ ի նորա վարս», Խոր. Յ ձեռ. ունի « առ ի
նորա վարս». Սեղ. « համբերողական», Լամբր. ձեռ.
համբերողական. իսկ մնացեալ թեթեւ տարբերու-
«

1. Հ. Բ. Սարգսեանը դրս լեզուն 12-րդ դարու «կարկա-
սակ» Է համարել եւ երբ հաստատուեալ ուրիշ բան է արա-
ցագունը, դժուարւնում է գեր խոսուովանէլ իւր՝ արտասուրիւ-
նը որոնելու զորիւմից առաջ եկած, սխալը, զիստիւնը
մարդկային անսխալականութիւն չէ ընդունում եւ ոչ էլ
սխալը խոսուովանէլը մեղք համարում:

Թիւնները, ինչպէս են Սեղ. «ոչ ուրե՛ք», Խոր. «ևր-
բե՛ր ոչ», Սեղ. «բարիակամ», Խոր. «լաւակամ», Ս.
srամապայծառացեալ» Խ. «պայծառ» և շն, ինչպէս նկա-
տել են պ. Խալաթեանը և Տէր-Մկրտչեանը, Խորե-
նացու կոկիսձ ձևերն են:

Համառօտ վարքի համապատասխան հատուածը
աւելորդ եմ համարում առաջ բերել. հետաքրքրուող-
ները կարող են բնագիրը կամ վերոյիշեալ յօդուած-
ները համեմատել. համառօտը շատ է տարբերուում
Պ. Խալաթեանի ենթագրութիւնը՝ թէ Խոր. հա-
տուածի սկզբի «գերազանցեալ» բառը, փոխանակ
«բարեվայելչացեալ», Փ. Սոկրատիցն է, կարձում ենք,
ոչ մի հիմք չունի. «գերազանցեալ»ը շատ սովորա-
կան բառ է, եթէ այդպիսի բառերի համար աղբիւր-
ներ որոնենք, այլ ևս ո՞վ կունենայ իւր աշխատու-
թիւնը:

2.

Վ.Ս.Ք. ՍԻՂ.Բ. Էջ 715.

ՄՈՎ.ՍԵՍ ԽՈՐԵՆ. Գ. 29.

«Յետ բարեբախտագոյն ձեր պատերազմու Սարմատացոցն զարձի»: 1

«Յետ բարեբախտագոյն Վա-
րդապետացոցն զարձի»: 1

Այստեղ ոճական փոխառութիւն է և ցոյց է
տալիս, որ Խորենացուն ծանօթ և ընտանի էր Սեղ-
բեստրոսի թարգմանի ոճը:

3.

Վ.Ս.Ք. ՍԻՂ.Բ. Էջ 710—727.

ՄՈՎ.ՍԵՍ ԽՈՐ. Բ. 83.

1 (Կոտաս) ոչ գիտէր զառ ի պոռնկէն ծնեալն . . . առ ի սանիք և Մաքսիմինայ դստերն

5. Ընդ նոյն աւուրս լինին հար-
կ և Մաքսիմինայ դստերն

1. Տես Գ. Տեր-Մկրտչեանի յօդ. էջ. 423 և ծն. Այս
կտր. և կատարել և միայն պ. նորայրը և Տեր-Մկրտչեանը:

Հեղինեայ (710) . . .

Դիոկղետիանոսի (ի Նիկոմիդայ),
փեսայանալով նմա Կոստանդինա-
նոսի կեսարի, որդւոյ Կոստայ
թագաւորին Հռոմայ:

2 Կոստանդինոս կայսր պա-
տանեակ գոլով . . . պարտեալ
. . . տրտմեալ էր . . . տեսնէ ի
գեղերին . . . յորում ննչէր (714)
տեսել ակեղեկալի յերկինս խաչ
. . . աստեղաց (ձառընտ. աստե-
ղեայ). այսու յաղթեա (715) . . .
հրամայեաց առնել զաւրինակ
խաչին . . . և տանել առաջի . . .
պատերազմու յաղթեաց (716):

2. որ ոչ էր ի դստերէն Մաք-
սիմիանոսի, այլ Հեղինեայ պոռն-
կէ ծնեալ: . . . (Նշ յետ ոչ բա-
զոսմ ամաց մեռեալ Կոստանդ.
փոխանորդ նմա առաքէ Դիոկղե-
տիանոս զնորին որդի և զիւր
որդիացեալն Կոստանդիանոս):

3 Դիոկղետիանոսի թագաւորի . . .
խորհեցաւ . . . վասն Կոստան-
դինոսի կայսեր, որդւոյն Կոս-
տայ թագաւորին Հռոմայեցւոց
. . . փեսայացուցանել ի դուս-
տըր . . . Մաքսիմինայ (719) . . .
եղեն ապա հարսանիք Կոստան-
դիանոսի և Մաքսիմինայ (720):

4. Սա յառաջ ըսն զբազառո-
րեղն մինչդեռ կեսար էր, պար-
տեալ ի մարտն և արտմութեամբ
մեծաւ ննչեալ, երևութացաւ
նմա ի ջուռն խաչ աստեղեայ յերկ-
նից, պարտեակեալ գրով, ասե-
լ այսու յաղթեա, զոր արբեալ
(սիւզգեոյն) և յառաջարեբեալ
յաղթեաց պատերազմացն:

4. Իսկ Կոստանդինոս թագա-
ւոր զՄաքսիմինայ Դիոկղետիա-
նոսի (721) դուստր ունելով կին,
զբազումս ի բրիտոննէից սատա-
կէր. և ինքն եղափանդական բո-
րոտութիւն ըստ բոլորն ընկալ-
եալ մարմնոյ վիրաւորեցաւ:

4. Բայց յետոյ հրապուրեալ ի
կնոջէն իւրմէ Մաքսիմինայ, ի
դստերէն Դիոկղետիանոսի, յա-
րոյց հալածանս եկեղեցւոյ, և
զբազումս վկայեալ, ինքն եղե-
փանդական բորոտութեամբ ըստ
բոլոր ընկալեալ մարմնոյն ապա-
կանեցաւ (վասն յանդգնութեանն):

Ուստի . . . Արիոկղեանն կա-
խարդք և Մարսիկեանն բժիշկք
և ոչ միայն նոքա (ձառընտ. այլնք)
այլ և որք ի Պարսից ասեալք . . .
ոչ կարացին աւգնել (722):

Ձոր ոչ կարացին բուժել և
մարսիկեան բժիշկքն . . . շիւթ
ի Պարսից և ի Հեղկաց, սակայն
և այնք ոչ հասին նմա յօգուտ:

3. ... 0մանք . . . է քրմանց տա-
ճարին ասելով՝ պարտ է աւա-
զան լինել . . . և ընուլ զնա ար-
եամբ . . . մանկանց . . . չերթ գորով . . .
լուանալ . . . գտանել բռնկութիւն . . .
բազմութիւն մանկանց ածին . . .

6. Մարք մանկանցն (723) . . .
ագով մեծաւ գոչելով . . . կակա-
նաբոյ ողբովք (724) . . . Եւ պար-
տեալ թագաւորն . . . նախամեծա-
րել պատուեմք քան զիմն առող-
ջութիւն զանպական տղայոցն
փրկութիւն (723):

7. Եւ ի նմին գիշերի տեսա-
նէ . . . երեւցան սուրբ առաքեալ-
քնն . . . ասելով . . . զի առաքես-
ցես առ Սիղբեստրոս եպիսկո-
պոս . . . որ է ի լերինն Սերապ-
տինոս (726) թագուցեալ . . .
ցուցանել քեզ կարասցէ աւա-
զան բարեպաշտութեան, յորում
ուսացեալ բացամաքրեսցես (727):

3. Զոր և քուրբք ոմանք (ի
դիշաց խրատոռէ) հրամայեցին
բազմութիւն տղայոց զենուլ յա-
ւազանս և չերթ արեամբ լուա-
նալ և ողլանալ:

6. Որոյ լուեալ զլալիւն ման-
կանցն հանդերձ մարցն կական-
մամբք գթացեալ մարդասիր-
եաց, զնոցայն լաւ վարկուցեալ
քան զիւրն փրկութիւն:

7. (Յաղագս որոյ զփոխա-
րէնն յՍատուծոյ ընդունէ), յա-
նըջական տեսութիւն առա-
քելոցն առեալ հրաման սրբիլ
լուացմամբ կենսատու աւա-
զանին, ի ձեռն Սեղբեստրոս
եպիսկոպոսի Հռոմայ, որ ի
նմանէ հալածանացն թագու-
ցեալ էր ի Սորակտին լեռանն:

(Յորմէ և աշակերտեալ հա-
ւատաց, զբռնաւորսն ամենայն
բառնալով Սատուծոյ յերեսաց
նորա, որպէս համառօտ ու-
սուցանէ քեզ Ագաթանգե-
ղոս:) 4

Պր. Խալաթեանը արտագրում է Սեղբեստրոսի
Համարեա ամբողջ հատուածը և ստորագծում նման
բառերը՝ մենք դիտմամբ քաղուած օրէն ենք վերար-

1 Տես Գր. Խալաթեան յ. 8. էջ 341—343. հա-
մաձայն եւ՛ ճրա հետ, որ Խորենացոյ միայն վերջի տողերն
եւ՛ Ագաթանգեղոսին վերաբերուով եւ ոչ ամբողջ գլուխը:

տագրել և թուահամարներով համեմատութիւնը հեշ-
տացրել:

Այս հատուածը եւ արդէն բաղդատել եմ յա-
ռաջաբանիս մէջ (էջ Ծ—ԾԴ) և թէև գտել էի
«ակնյայտնի նմանութիւններ» և նոյն իսկ «բառացի
արտագրութեան» հեղաքեր, բայց իսկական եզրակա-
ցութիւն չէի հանել. ոչ թէ «ինչ որ կանխակալ կար-
ծիքի շնորհիւ նախաւճռել էի» վիճելի խնդիրը, ինչ-
պէս Պրոֆ. Խալաթեանն է ինձ մեղադրում, այլ ո-
րովհետեւ Խորենացոյ երկու կէտը ինձ մոլորեցրել էին.
առաջինն է յիշեալ գլխի մէջ գործածուած «սիւգնոյն»
բառը և ապա գլխի վերջում Ագաթանգեղոսի ակնե-
րեակի յիշատակութիւնը. Երբ նկատուել է առաջի
մեծ բառական փոխառութեան հատուածը, իրաւ հեշտ
է հասկանալ, որ Խորենացին դիտաւորեալ, նախա-
մտածած ծրագրով ցանկացել է շփոթեցնել իւր ըն-
թերցողներին, Ի՛նչ կասկած որ երբ նա օգտուում էր
Սեղբեստրոսի վարբից՝ այդ վարբը արդէն ծանօթ կլի-
նէր ժամանակակիցներին, բայց թէ նա ինչ հանձարեղ
վարպետութեամբ կորցնում է իւր գործ դրած աղ-
բիւրի հեղաքերը, այդ պարզ է, Երբ կարիք է զգում
Մեսրոպին բարձրացնելու, նա առանց քաշուելու
արտագրում է Սեղբեստրոսի վարբը, — անձանց տար-
բերութիւնը ապահովում էր նրան —, իսկ երբ
պատմում է Վոստանդի և Սեղբեստրոսի վարբը, նա
քաղուածներ է անում յետ ու առաջ դասաւորու-
թեամբ, մէջը հիւստում է Տրդատի պատմութիւնը և
վերջն էլ տալիս իւր աղբիւրի անունը. Ես այդ մարդու
համար դեռ մի քանի ամիս առաջ գրել եմ. «բայց ոչ ոք
(բացի Վարիէրից) չէր յայտնել այն աստիճան ծայ-

րահեղ կարծիք, հաստատուած այդքան հիմնաւոր
 թուացող փաստերի վրայ, թէ նա (Մ. Խոր.) կեղծել է,
 թէ երկար ժամանակ կարողացել է խաբել ընթերցող-
 ներին և որնա երկու երեք դարուչ պարելով և գրե-
 լով, կեղծելու արտակարգ ընդունակութեամբ զգալ
 չէ տուել այդ կեղծիքը» (էջ ԼԹ). և այսօր ստիպուած
 եմ խոստովանուել, թէ նա կեղծ է, և ամենամեծ
 վարպետութեամբ՝ հէնց մեր համեմատած գլուխը:
 Աւրեմն համաձայնուելով պ. Խալաթեանի և
 Գ. Տ. Մկրտչեանի հետ, ես էլ ընդունում եմ որ
 Մ. Խորենացին գրուել է 676 թ. հայերէն շեղուով
 թարգմանուած Սեղբեւորոսի ընդհանուր կարգից, հետևա-
 պէս նրա պատմութիւնը այդ տարեթուից ուշ է,
 Լ. Բ. Սարգսեանը իւր յօդուածի մէջ¹ (էջ 569)
 փորձում է ցոյց տալ որ Խորենացին օգտուել է ոչ
 թէ Սեղբեւորոսի վարքից (նա սխալմամբ գրել է Մեծ
 Սոկ.²) այլ Եւսիգնիոսի պատմութեան յունարէն

1 Տես Լ. Բ. Սարգսեանի, Սոկրատեսի և Սոկրատեսի
 հրատարակութիւն եւ Մ. Խորենացի. Բաղնայկայ.
 1897. էջ 565—575:

2 Վերսպասուելի է այդ. Իոսիմ հրատարակութիւնը
 սխալաբան է անուանել. յառաջարակիս մէջ դրա մեղք
 մենակ ինձ վրայ եմ առել. բայց երբ Ձեզ մօտաւորապէս
 յայտնի լինեի՞ն սպագրութեան դժուարութիւնները, գուցէ այլ
 կերպ դասեի: Ձեր վիրտուտեանի գուցէ մասամբ իմիս պա-
 սախանը շնորով յառաջարակիս մէջ, Ձեր ֆինակակ յօդու-
 ծի մէջ աստիկ սկսեալակն էք. ցանկալի էք ֆինուրեան
 մէջ ուրիշ լեզու լսել. Իոսի Ձեր կարծիքով հարկաւոր էք
 համարել նաև յունարէն բնագրի հրատարակութիւնը, գու-

բնագրից. բայց երևում է որ նրա ձեռքը գեթ հա-
 սած չէն եղել Խալաթեանի և Գ. Տ. Մկրտչեանի
 յօդուածները (թէև Խալաթեանը և Տ. Մկրտչեանը
 գրել են Հոկ. Նոյ. ամիսներին, իսկ Լ. Սարգսեա-
 նը Պեկտ.), այլապէս կտեսնէր որ այստեղ օտար
 լեզուից թարգմանութեան խնդիր չկայ, որ յոյն
 հին կամ նոր աղբիւր որոնենք, այլ կայ միայն հա-
 յերէն թարգմանութեան արտագրութիւն:

ԽՈՐԵՆԱԳԻՆ ԵՒ ՄԵԾ ՍՈԿՐԱՏԻ

Անցնենք երկրորդ խնդրին. Խորենացին օգտուել է
 695—696 թուի թարգմանուած Մեծ Սոկրատի
 հայերէն բնագրից, թէ ոչ:

Մենք մեր յառաջաբանի մէջ եկել ենք այն
 եզրակացութեան, թէ «Խորենացին զժբախտաբար
 չէ ունեցել իւր ձեռին Սոկրատի պէս պարզ և ճիշտ
 տեղեկութիւններ տուող մի պատմագիր», ժխտելով,
 որ ոչ յունարէն բնագիրը և ոչ էլ հայերէն թարգմա-
 նութիւնը նրան աղբիւր են ծառայել: Իմ քննադատ-
 ներից Լ. Սարգսեանը (էջ 570, 571) պնդում է, որ
 հակառակն է ուղիղ «յունարէն բնագրի նկատմամբ»,
 բայց փոխանակ փաստեր տալու, զժբախտաբար անց-
 նում է՝ միայն ընդհանուր գատողութիւններ տալով:

զընրաց հայերէնին, եւ յիմեղը նկատում էք Բեւեռ-էն, մի-
 այն խնդրի որ յունարէն այն կես ու արքողը բաւերն
 էր սպագրելու համար ինձից արքողը ժամեր են խել:

«մեր նպատակէն դուրս է այստեղ կանգ առնուլ ցոյց տալու համար, թէ Մովսէս ինչ բաներ Սոկրատէն օգտուած է և ինչ բաներու մէջ կը համաձայնի Եւսեբիոսի և ուրիշ պատմագրաց. վասնզի այդ պէրնէն «բրէն ցոյց որո՞ւմ են «բրէնէր» յետոյ (?)» և մենք իսկ առ Կարիէր ուղղած պատասխանին մէջ ջանացեր ենք մատնանիշ ընել»։ Ընդհանուր դատողութեանց առաջ ոչինչ ասելիք չունենք. հարկաւոր և անհրաժեշտ էր ամենափոքր, բայց հաստատ փաստ, Եւ ինչո՞ւ պէտք է խառնել խնդիրները. ինչ հարկ կայ Խորենացու «աղբիւրներ» մասին խօսել, որոնցից շատերը յայտնի են իր Խորենացու վկայութեամբ, շատերն էլ ցոյց են որո՞ւմ «բրէնէր» յետոյ՞։ զոցս մէջ է արդեօք Սոկրատը. Այդ չկարողացանք իմանալ Հ. Սարգսեանի ասածներէց։

Պրոֆ. Խալաթեանի կարծիքը կարևոր կլինէր, եթէ նա խուսափողական ճանապարհ ընտրած չլինէր, նա, որ շարունակ ուսումնասիրում է Խոր. պատմութիւնը և անշուշտ քաջ ծանօթ է նրան, դարձեալ ոչ մի փաստ չէ բերում հաստատելու իր այս ասածը. «Խորենացին որ *անշուշտ գիտէ Մեծ և Փ. Սոկրատին»* (յ. տ. էջ 354), Ես Խորենացու և Մ. Սոկրատի մէջ նմանութիւններ գտել էի միայն Արաց դարձի պատմութեան մէջ. պ. Խալաթեանն էլ հէնց այդ հատուածն է քննել և բաղդատել, բայց վերջը եկել է այս եզրակացութեան. «իսկապէս (Խորենացին) օգտուել է Փ. Սոկրատից, առանց այդ դարձրանալու դէպք այս անգամ դէպի Մեծ Սոկրատ» (էջ 385). Եթէ այս դէպքում էլ աչք չէ դարձրել դէպի Մեծ Սոկրատը, ինչո՞ւ չցոյց տալ թէ ուրիշ ինչ անգամ է

օգտուել. և արդեօք հայերէն թարգմանութիւնից, թէ յունարէն բնագրից, նա խուսափելով իւր վերջին երկու եզրակացութեան մէջ էլ շեշտում է միայն Սոկրատի եօթներորդ դարու թարգմանութեան համառօտութիւնը և Սեղբեստրոսի նոյնպէս եօթներորդ դարու վերջում կատարուած ընդարձակ և համառօտ «բարգմանութիւններ» (?), առանց յիշելու հայերէն Մեծ Սոկրատը կամ նրա յոյն բնագիրը.

Ուրեմն մենք չենք գտել, մեր քննադատներն էլ չեն ցոյց տուել թէ Խորենացին ինչ դէպքերում է օգտուել Մ. Սոկրատի յոյն կամ հայ օրինակներից, մինչև այդ ցոյց չտրուի, նա չէ կարող Խորենացու աղբիւրների կարգում հաշուել.

Գ.

ԽՈՐԵՆԱՅԻՆ ԵՒ ՓՈՔՐ ՍՈՒՐԱՏ.

Անցնենք երրորդ, և իմ կարծիքով ամենակարևոր խնդրին. Խորենացին ծանօթ էր Փոքր Սոկրատին, թէ հակառակն է ուղիղ: Եթէ 676 թիւը այժմ Խորենացու պատմութեան ամենահին յայտնի թուականն է, որից առաջ նա լինել չէ կարող, ապա եթէ ցոյց տրուի այս երկու պատմագիրների կապը և հաստատուն առնչութիւնը, այն ժամանակ կունենանք Խոր. պատմութեան մի երկրորդ տարեշրջան, թէև ոչ առաջուայ պէս հաստատուն տարեթուով, որից յետոյ և կամ որից առաջ, անհնար կլինի նրա պատմութիւնն ընդունել:

Իմ բացատրութիւնները թէ Խորենացին է Փոքր Սոկրատին աղբիւր ծառայել, պ. Խալաթեան

նին չեն համոզել. նրա կարծիքով պ. Վարիէրը արդէն հակառակն ապացուցել է. «Խորենացին» ասում է նա (էջ 292), ճանաչել է հայերէն Սոկրատի պատմութիւնը, այդ ապացուցել է, և մեր կարծիքով համոզեցուցիչ կերպով Պրոֆ. Վարիէրը. — Պէտք է «հայերէն Սոկրատ. Փոքրը հասկանալ, որովհետեւ պ. Վարիէրին միայն այդ էր յայտնի. Իսկ մենք կարծում ենք և համոզուած եւք, որ աւելի համոզեցուցիչ կերպով հակառակն ենք ապացուցել: Ի հաստատութիւն Վարիէրի կարծիքի պ. Խալաթեանը համեմատում է Մեծ Թէոդոսի պատերազմը բունակալ Եւգէնիոսի դէմ (Սոկր. Ե. Գլ. 25 էջ 480) և Հայոց պատերազմը դաւաճան Մեհրուտանից առաջնորդուած պարսիկների դէմ Չիրաւի գաշտում (Սոկր. Գ. 37-րդ գլուխ), Խորենացու այդ գլուխը ըստ Խալաթեանի մի քանի աղբիւրից յօրինուած մօզաիկ է», որի մէջ «Եւ խրեցաւ պարսեացիս» որ կոչի միւսիւ պարսեցաւ, հողս, ընդդէմ ի փախուս դարձուցանէր, գօշմն բշուսաց» և ըն թանկագին քարերը առնուած պիտի լինին Փ. Սոկրատի վերոյիշեալ պատերազմի նկարագրութիւնից. «ուր Փ. Բիւզանդ. թէև կերպարանափոխուած, պատմութեան հիմքն է կազմում» (էջ 292—293): Եւ հաւատում եմ և ընդունում որ Մ. Սոկր. իսկապէս յայտնի գրուածքներից «մօզաիկ» կազմել սիրում է, ինչպէս այդ ցոյց է տուել ուրիշների հետ ինքը յարգելի գիտնականը. 1 բայց թէ մի որ և է

1. Համեմատելու նրա փնտրիքը. «Մովսէս Խորենացի և իւր սորիւրները. Գրիգոր Աստուածաբան». Յարեւրում «Արարես»-ի 1897 թ. Նոյ. Գեկ. էջ 531—539.

պատերազմ նկարագրելով Խորենացին ստիպուած լինէր դիմելու Փ. Սոկրատի պատմութեան պէս մի խնդր գործի և այնտեղից փոխ առնէր «գօրք, թըշնամի, պարտեցաւ, հողմ, պատերազմ, ընդդէմ» լոկ հայերէն և ամենասովորական բառեր, այդ մինք ըմբռնել չենք կարողանում. որովհետև չենք ընդունում թէ Խորենացին այդքան սահմանափակ, լատիներէն շարադրութիւն գրող աշակերտի յապկութիւն ունեցող մէկը լինէր, որը իւր գրութեան մէջ յարմար թէ անյարմար գործ է ածում Կիկերոնի, Յ. Վեսարի և ըն անգիր սովորովի ոճեր ու բառեր, այլ է եթէ պ. Խալաթեանը իւր համեմատած հատուածի մէջ ցօյց տար այնպիսի բնորոշ փոխառութեան օրինակներ, ինչպիսիք շատ կան Գր. Աստուածաբանի գործերի մէջ (համեմ. իւր իսկ քըննութիւնը «Արարատ»-ի մէջ օր. 11, 12, 13, 14, 15, և ըն. և սոքա աշակերտական փոխառութիւններ չեն),

Մի ուրիշ հարց. Փ. Սոկրատի և Խորենացու նման դարձուածների մի մասը կայ նաև Մեծ Սոկրատի մէջ, միայն քերականական թեթեւ փոփոխութիւններով և շիրեն յատուկ աննշան յարեւումներով, և հէնց այդ փոփոխութեամբ իւրով ու անշան յարեւումներով են երկուսը իրար նման, հետևապէս տարբեր Մ. Սոկրատից, որ ասել է Փ. Սոկրատի աղբիւրից: Սա շատ նշանաւոր խնդիր է. մեր յառաջաբանի մէջ քանիցս շեշտել ենք այդ իսկ պ. Խալաթեանը միանգամայն լուութեան է տալիս այդ կետը. Եթէ Խորենացին իրեն յատուկ վարպետութեամբ կարիք ունէր «մօզաիկ» կազմելու, ինչքան աւելի մեծ է եղել այդ կարիքը Սոկրատի համա-

նօտչի համար, որ խեղճ և սահմանափակ մէկն էր, թէ այդ նոր, պ. Խալաթեանցի շատ անյաջող կերպով բաղդատած, հատուածում և թէ Արաց դարձի ու Կոստանդին մեծի բորոտութեան պատմութիւնների մէջ Խորենացին և Փոքր Սոկրատը իրար նմանում են այդ կարելի է տեսնել, բայց նմանում են ոչ ուրիշի մտերով որ չեն Մեծ Սոկրատի և Սեղբեապետի ընդհանուր վարքի մէջ. Պր. Խալաթեանը ինձ հետ համաձայն է, որ Փոքրը երկուսի համառօտութիւնն է «իրեն յատուկ յաւելուածներով», թէ և նա իւր վերջի եզրակացութեան մէջ ինչիւր շփոթելով կրկին՝ երկու «վարդմանութիւնների» մասին է խօսում. Արզ. Բնական է երբ Խորենացու աղբիւրն ենք որոնում, որոնքնք նաև Փոքր Սոկրատի իւրատեսակ յաւելուածներէ աղբիւրը, որոնք անկասկած հայկական են, և ոչ թէ առանց փաստի ընդունենք թէ հէնց Խորենացին է ամեն ինչ վերցրել, Աւրեմն մի առժամանակ Մեծ Սոկրատը մի կողմ թողնենք և քննենք Փոքրի յաւելուածների ինչիւրը, ինչպէս որ վարուել ենք զլիսաւորապէս մեր յառաջարանի մէջ 12 հատուածները բաղդատելիս, որոնց դարձեալ քննութեան կենթարկենք:

Հատուած 1. (Յառաջ. Սոկր. էջ Ծ. սր. Խալ. յօդ. էջ 342)

Յառաջարանիս այս առաջին հատուածում բաղդատուած է կեսար Կոստանդինի կրած պարտութիւնը Բիւզանդացիներից և աստեղանշան խաչի տեսիլը երկնքում: Պր. Խալաթեանի հետ ընդունում եմ, որ Ընդ. Սեղբ. է Խորենացու աղբիւրը՝ բայց աւել-

լացնում եմ, թէ Բն. չկայ որ Խոր. վերցրած լինէր Համառօտ Սեղբեստրոսից, և կարիք էլ չկար, որովհետև ամենը կայ Ընդարձակում տարբեր Համառօտից:

Հատ. 2. (Յառ. էջ ԾԲ. Խալ. էջ 342.)

Բաղդատուած է Կոստանդին մեծի բորոտութեան, անմեղ մանուկների զոհելու զիտաւորութեան և Սեղբեստրոս եպիսկոպոսի ձեռքով հրաշքով ազատուելու պատմութիւնը, Խորենացու աղբիւրը Ընդարձակն է, բայց նա ունի մի քանի դարձուածներ և բառեր, որոնց նմանը կան և Փոքրում. թէ Խոր. և թէ Փոքրի մէջ դոքա բղխում են ուղղակի Մեծից և ցոյց են տալիս փոխ առնողի ինքնուրոյնութիւնը. օրինակ.

Խոր. բայց հրապուր-	Ընդ. Վ. իսկ կիննորա	Համ. Վ. բայց հրա-
եալ ի կնոջէն իւրմէ	վրդովեաց զնա հակա-	պուրեալ ի կնոջէն
Մաքսիմիայ. . . յարոյց	ուակ քրիստոնէից . . .	իւրմէ Մաքսիմիայ. . .
հալածանս եկեղեցւոյ	զբազումս ի քրիստո-	արար հալածանս ե-
և զբազումս վկայեալ. . .	նէից սատակեր . . .	կեղեցւոյ, բազումք
ի Պարսից և ի Հնդկաց	ի Պարսից	եղեն վկայք . . .
. . . մարմնոյն ակակա-	. . . մարմնոյ վիրաւորե-	ի Պարսից և ի Հայոց.
նեցաւ,	ցաւ.	մարմին . . . ակականեր.
քուրմը ոմանք ի դիւաց.	ոմանք առ ի քրմանց.	քուրմը ի դիւաց.

Ընդարձակի «վրդովեաց» բառը Խոր. և Փոքրի մէջ դարձել է «հրապուրեալ», իսկ երկուսն էլ քրիստոնեանների մասին չկամենալով «սատակեր» գործածել, փոխել են «յարոյց (արար) հալածանս եկեղեցւոյ» . . . Այս դէպքում երկուսն էլ միևնոյն աղբիւ-

րից են քաղում. դուցէ երկուսն էլ անկախ նոյն ձևով են կրճատել. կարևորն այս է, որ ընդհանուր աղբիւրը երկուսի ձեռքն էլ տալիս է նիւթը՝ երկրորդ աղբիւրի դիմելու կարիք չկայ: Միակ թէպէտ մնում են Խոր. «ի Հնդկաց, իսկ Փոքրի «ի Հայոց» յաւելելալ բառերը. Հետեւապէս այս հատուածը անկախ կերպով խնդիրը վճռել չէ կարող, ուրիշ փաստ որոնենք և յետոյ ինքն իրան այս հարցը կվճռուի:

3. Հատ. (Ծառաջ. էջ ԺԶ.)

Համեմատուած է Լիկինիոսի կայսր կարգուիլը Կոստանդին մեծից. այս հատուածը ամբողջ կը կրկնենք:

ԽՈՐ. Բ. 88.

Փ. ՍՈՎՐԱՍ ԵՋ Ծ.

«Ի բառնայն Աստուծոյ զբառնաւոր- «Յորժամ էառ (Կոստան-
պն ամենայն յերեսաց Կոստանդիա- զիանոս) զյաղթութիւն մի-
նոսի, մեծարեաց նա զԼիկինոս մե- անամոռն թագաւորացն,
ծութիւն յոյժ, և ետ նմա կնութեան զԼիկինոս քեռայր իւր քա-
ղքոյը իւր ոչ համամայր. ծիրանեօք գաւորեցոցաներ:»
և պակաւ կայսերական զարդարեաց
զնա, և յերկրորդականս հասուցեալ
պատիւս, արքայ ամենայն արեւելից կացոյց:»

Մեծ Սոկրատի՝ Փոքրի բնագրի մէջ պատմուած է, որ Ստասիտիոս Կոմիտիոսը իւր մեռնելուց առաջ Լիկինիոսին Մագաւոր կորէց, իսկ Կոստանդինը իւր թագաւորակցին իւր քրոջը կնութեան տուաւ, ուրեմն բնագիրն ու համառօտութիւնը տարբեր են: Եթէ մի բոպէ ընդունենք, որ Խոր. օգտուել է թէ Մեծից և թէ Փոքրից, ինչպէս Պրօֆ. Խալաթեանն է ասում:

այդ դէպքում էլի Խոր. հատուածը չի բացատրուիլ, և մենք ստիպուած երրորդ աղբիւր պէտք է որոնենք նրա «և յերկրորդականս հասուցեալ պատիւս, արքայ ամենայն արեւելից կացոյց» նախադասութիւնը բացատրելու համար. իրաւ է Մեծի մէջ կայ. «կեայր (Լիկինոս) յարեւելս», բայց թէ պատուով երկրորդական էր, երկուսի մէջ էլ ոչինչ չկայ: Մինչդեռ տեսանք թէ Խոր. Սեղբեստրոսի վարքից օգտուելիս շատ անգամ քերականական ձևերն էլ է պահպանել, ինչո՞ւ այստեղ այդքան տարբեր, և որտեղից են նրա յաւելուածները, որտեղից է ՓոքրՍ.ի աղբիւրը, Ուրեմն Խորենացու հատուածը Մեծ և Փոքր Սոկրատներով չէ բացատրուում: Հարկաւոր է ուրիշ աղբիւր որոնել. Փոքր Սոկրատը տարբեր է պատմում իւր բնագրից, նրա Կարէրոսիւնը բացառուած է խորենացու հարցումով Լիկինիոսի, իսկ Խորենացունը ոչ: Թէ Կոստանդինը «միահամուռ» թագաւորներին յաղթեց, այդ չկայ Մեծի մէջ, դա է Խորեն. «ի բառնայն զբռնաւորսն ամենայն», և թէ «Կոստանդիանոս զքեռայր իւր թագաւորեցուցանէր» դրա միտքն էլ կայ Խոր. «արքայ կացոյց» բառերի մէջ: Այստեղ փոխառութիւնը բառական չէ, այլ մտքով. բայց նախընթաց հատուածում մենք տեսանք բառացի նմանութիւններ. այնտեղ խնդիրը չկարողացանք հաստատապէս որոշել, իսկ այստեղ երբ պարզ երևում է թէ երկուսից որը կարող է կախում ունենալ միւսից, նախընթացի անպատասխան թողած հարցը իւր լուծումն է ստանում:

5. Հատ. (էջ ԿԲ—ԿԴ) (4-ը թողնում ենք իբրև անկարելորդ.)

Խոր. Բ. 88 գլխում պատմում է Բիւզանդիոն քաղաքի վերաշինութիւնը Վոստանդին Մեծի ձեռքով: Նա «յանրջական իմն նախատեսութեանց հրամայեալ» քաղաքը վերակոչում է «Նոր Հռոմ», իսկ աշխարհ կոչեաց զնա Վոստանդիանու քաղաք: Քաղաքը զարդարելու համար «գաղտնի եհան ի Հռովմայ զասացեալսն պաղատիոն քերածոյ, և եղ զնա ի փորոնիս»: Մեծ Սոկրատը, նրանից առնելով Փոքրը՝ ունեն այս պատմութիւնը, էութեամբ նման Խորենացուն, մանրամասնութեան մէջ տարբեր: Մեծը միայն այբբան է ասում, որ Վոստանդին թագաւորը իւր իշխանութեան 20-րդ տարին «յինքեան իսկ համանուան» Բիւզանդիոնը մեծամեծ պարիսպներով և շինութիւններով զարդարեց «հաւասար թագաւորեցելոյն Հռովմայեցոց Վոստանդնի քաղաք անուանելով, երկրորդ Հռոմ տիրացոյց. . . և գրչփուռնսն զերեքոտեանսն յապարիսի նոր քաղաքիս զնէր»: Ոչինչ չկայ ոչ երազի և ոչ էլ «պաղատիոն»-ի ու «փորոնի» մասին. յետոյ այստեղ Վոստանդինը ինքն է քաղաքի անունը փոխում, «Վոստանդնի քաղաք անուանելով», իսկ Խոր. մէջ Վոստանդինը «անուանեաց Նոր Հռոմ, իսկ աշխարհ կոչեաց զնա Վոստանդիանու քաղաք»: Տեսնենք Փոքրը ինչպէս է պատմում: արդեօք նա հետևում է իւր բնագրին թէ ոչ: Թագաւորը արևմուտքից «գառնայր» (ունի Խոր. Մեծը չունի) «ի Վոստանդնուպօլիս» (Խոր. ուղիղ

ունի «Բիւզանդիոն») և «ըստ տեսլեան ցուցակութեան» զարդարեց շինութիւններով ինքն անուանելով Վոստանդինա քաղաք և «երկրորդ Հռոմ տիրացոյց ի վերայ աշխարհիս», շարունակութիւնը Մեծի պէս է: Այստեղ էլ բնականաբար առաջ են գալիս նոյն հարցերը. երկու գրողներից ո՞րն է միւսի աղբիւրը: Խորենացու պատմութեան զանազանութիւնները չեն մեկնում ոչ Մեծ, ոչ էլ Փոքր Սոկրատը, և ոչ էլ երկուսը միասին առած. պէտք է դարձեալ երրորդ աղբիւրի դիմել, որից նա պէտք է վերցնէր «պաղատիոն քերածոյ» և «փորոն» դարձուածները: Մինչդեռ Փ. Սոկրատի երազի և մանաւանդ «աշխարհին» խօսքի յաւելուածները բացատրում են Խորենացու պատմութեամբ. ուրեմն եթէ կայ փոխառութիւն, — իսկ այդ ընդունում են բոլորը, անպայման Խորենացուց է:

Այսքանը բաւական եմ համարում երրորդ Փոքր Սոկրատի և Խորենացու առնչութեան խնդրի մասին. աւելին ցանկացողները թող բարեհաճեն հրատարակութեանս յառաջաբանի ԿԵ—ԼԶ. էջերը նորից ուշադրութեամբ կարդալ:

Ինձ համար անհամոզեցուցիչ է հետևապէս անընդունելի մնացին պրոֆ. Խալաթեանի քննական յօդուածի եզրակացութիւնները, որոնք են.

ա. «Խորենացին ճանաչել է Սոկրատի եկեղեցական պատմութեան եօրևերորդ դարու հայերէն թարգմանութեան համառօտութիւնը, կամ որ նոյնն է, Փ. Սոկրատը, և օգտուել է նորանից (էջ 359)»: Մենք տեսանք որ Փ. Սոկրատը Խորենացու աղբիւր լինել չէ կարող, այլ հակառակն է ուղիղ:

բ. Խորենացին ճանաչել է Ս. Սեղբեստրոսի վարքի նոյնպէս եօթներորդ դարու վերջում կատարուած Բնդարձակ և Հաւսոս հայերէն թարգմանութիւնները¹ (?), և օգտուել է նոցանից: Ուղիղ է Ընդարձակի մասին ասածը, իսկ Համառօտի մասին ոչ: Ուստի լրացնելով և ուղղելով մեր հրատարակութեան յառաջաբանի եզրակացութիւնները՝ ի նկատի առած մեր քննադատների ասածները ընդունում ենք:

ա. Խորենացին օգտուել է 676 թ. հայերէն լեզուով թարգմանուած Սեղբեստրոսի ընդարձակ վարքից, հետեալպէս այդ թուից առաջ չկար Խորենացու պատմութիւն:

բ. Խորենացին չէ ճանաչում Մեծ Սոկրատի ոչ հայերէն թարգմանութիւնը և ոչ էլ յունարէն բնագիրը:

¹ Յարգելի Պրոֆեսորը մի քանի անգամ է (էջ 340), որ եւ Խորենացու աղբիւր լինողներով Սոկրատի պատմութիւնը, ուրիշ «սեր ձեռքը չհասած բարգմանութիւն» եւ եկեղեցի, եւ լգիսեւ ինչ հիման վրայ իմ եկեղեցիս բարգմանութիւնը էրէն, էրէն եւ կամ «չորրորդ» է դարձել, ուրեւն Վերջինի ինձ այն, ինչ որ լիւ ստել. իսկ այժմ կհամի՞ ևս արդեօք ցոյց տալ «Սոկրատի էրէն ևս, Բարգմանութիւնը» (էջ 358 եւ 259), որով ինքն իրան պարգօրեմ հակասում է, քանի որ ինձ հետ համաձայնելով ընդունել է ի վերջին Բարգմանութիւնը եւ դրանից կատարուած մի հաւսոսութիւն (Հաւ. էջ 291, 292 եւ մասնաւոր 359 * եզրակացութիւնը):

գ. Փոքր կոչուած Սոկրատը կրճատուելով եօթներորդ դարու վերջում կամ ութերորդի սկիզբները, իւր բնագրից շեղուելիս և յաւելուածներ ընդունելիս, օգտուել է ի միջի այլ հայաղբիւրների, նաև Խորենացու պատմութիւնից:

դ. Խորենացու պատմութիւնը, ինչպէս որ այսօր ունենք, գրուել է Փրկչական 676 թուից մինչև եօթներորդ դարու վերջը, մօտաւորապէս նոյն դարու վերջի 20—25 տարիների շրջանում:



4316

2013

